

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«START-ME-UP» ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Տեղեկացնում ենք, որ ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագիրը (ՄԱԶԾ ԿՀ) հայտարարում է գործարար նորարարական նախաձեռնությունների համաֆինանսավորման մրցույթ, որն ուղղված է Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի 34 սահմանամերձ բնակավայրերում ագրովերամշակման ոլորտում գոյություն ունեցող կամ նոր ստեղծվող փոքր բիզնեսների աջակցմանը, արդյունավետության բարձրացմանը, վերազինմանը և վերապրոֆիլավորմանը:

Նորարարական նախաձեռնությունների իրականացման նպատակով ՄԱԶԾ ԿՀ տրամադրում է ներկայացված և ընտրված Ծրագրի ընդհանուր արժեքի՝ առավելագույնը 20.000 ԱՄՆ դոլարի 70% համաֆինանսավորում՝ նախագծային և նախահաշվային աշխատանքների, ագրոպարենային ոլորտի սարքավորումների, շինանյութի և գույքի ձեռքբերման, մարքեթինգային ծախսերի, մասնագիտական խորհրդատվության և վերապատրաստման դասընթացների համար:

Ծրագրերի ընտրությունը կատարվելու է երկու փուլով ՄԱԶԾ ԿՀ-ի կողմից սահմանված պայմաններին և չափանիշներին համաձայն՝ մրցութային հանձնաժողովի կողմից:

«Կայուն համայնքներ» ծրագիրն ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության կողմից, իրականացվում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ:

➤ **Մրցութին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր.**

- ունեն ՀՀ քաղաքացիություն, վերջին 5 տարվա ընթացքում մշտական բնակություն Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի սահմանամերձ բնակավայրերում,
- ունեն նորարարական նախաձեռնությունների ծրագիր կապված գյուղատնտեսական ապրանքների վերամշակման և սննդի արտադրության հետ,
- պատրաստակամ են ներդնել ֆինանսական միջոցներ Նախագծի ընդհանուր արժեքի 30%-ի չափով,
- Նախագծի մեկնարկին կլինեն ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
- նվազագույնը երեք տարի պարտավորվում են իրականացնել Նախագիծը,
- պարտավորվում են իրականացնել ՄԱԶԾ ԿՀ ծրագրի կողմից մշակված և ծառայությունների բարելավմանն ուղղված դրույթները, մասնակցել վերապատրաստման դասընթացներին ու միջոցառումներին:

Մրցութին մասնակցելու համար հարկավոր է առցանց լրացնել ՄԱԶԾ ԿՀ-ի կողմից մշակված հայտադիմումը:

Այն կարող եք գտնել [այստեղ](https://form.jotform.com/SustainableCommunities/start-me-up-project) կամ հետևել հղմանը՝

<https://form.jotform.com/SustainableCommunities/start-me-up-project>

Հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ ա.թ. հուլիսի 20-ը՝ ժամը 18:00:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Ժամկետանց և ոչ լիարժեք հայտերը չեն դիտարկվելու,
- Ծրագիրը կապ կհաստատի միայն առաջին փուլով ընտրված մասնակիցների հետ:

Հարցերի համար կարող եք զանգահարել +(374 96) 439323; +(374 91) 041323; +(374 93) 921099բջջային հեռախոսահամարներին, աշխատանքային օրերին (երկուշաբթիից-ուրբաթ) ժամը 10:00-18:00:

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿ**

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
Ճամբարակի տարածաշրջան		Վարդենիսի տարածաշրջան	
Ճամբարակ համայնք	Շողակաթ համայնք	Վարդենիս համայնք	Գեղամասար համայնք
Ճամբարակ Թթու ջուր Վահան	Արտանիշ Զիլ Ծափաթաղ	Վարդենիս Ներքին Շորժա Վերին Շորժա	Սոթք Ավազան Արփունք Գեղամասար Դարանակ Կախակն Կուրթ Կուտական Նորաբակ Տրետուք Շատվան Փամբակ

ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ

Զառիթափ համայնք	Արենի համայնք
Բարձրունի	Խաչիկ
Խնձորուտ	Արենի
Նոր Ազնաբերդ	Ելփին
Սերս	Չիվա
Մարտիրոս	Ռինդ
Գոմք	Գնիշիկ